

ԵՌԱԲԼՈՒՐ

«ԳՈՅՈՒԹՅՈՒՆՆԱՆ ԱՆՊԱՏՈՒՀԱՆ ՓԱԿՈՒՂԻ»

ՆԵՐԻՐ ԻՆՁ, ԳՍԱՄՂՍ...

Իմ մնացյալ կյանքն անպատասխան զրույց է քեզ հետ, Վահագն՝

Վահագն Վալերիի Սարգսյան, լեյտենանտ:

Ծնվել է 1980 թվականի օգոստոսի 12-ին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Չրջանի Առաքյալ գյուղում:

1986-ին ընդունվել, 1997-ին ավարտել է Ստեփանակերտի Աշոտ Դուլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցը:

Բարձրագույն իրավագիտական կրթություն է ստացել Ստեփանակերտի Գրիգոր Նարեկացի պետական տարածաշրջանի համալսարանում (1997-2002):

Պարտադիր զինծառայությունն անցել է Արցախի պաշտպանության բանակի N գորամասում (1997-1999):

Ամուսնացել է 2006 թվականին: Ունի երկու դուստր:

Կինը՝ Օֆելյա Մարտիրոսյանը, ծնված 1982 թ. Ստեփանակերտում, Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի դերասանուհի է:

Դուստրը՝ Գիսանեն, ծնվել է 2015 թվականին:

Դուստրը՝ Նանան, ծնվել է 2017-ին: Արցախի երկրորդ պատերազմին մասնակցել է սեպտեմբերի 29-ից:

Զոհվել է Կարմիր Շուկայի մատույցներում, նոյեմբեր 7-ի լույս 8-ի գիշերը: Հանգչում է Եռաբլուրում:

Վահագն աշխարհ է եկել առաջնեկի իրավունքով՝ որպես գեղեցիկ սիրո ծնունդ: Նրա առաջին ճիշտ աշխարհը գունափոխվել ու իմաստափոխվել է ինձ համար: Նա իմ ուժի, զորության, դիմադրողականության, կենսունակության աղբյուրն էր, ապրելու արդարացումը:



Գիսանեի վերջին այցը Խծաբերդ:

Հինգ տարի հետո միայն ես ունեցա իմ երկրորդ զավակին՝ Վահենին, ով Վահագնի համար խաղընկեր չէր, այլ Վահագնի պաշտպանության ու հոգատարության առանցքի ապերիկը՝ տանը, բակում, դրպրոցում ու հետագա տարիներին՝ ամենուր: 1988-ին դստերս՝ Արուսի ծնունդով մեր ընտանիքն առավել գեղեցկացավ, քնքշացավ:

Արցախի առաջին պատերազմի տարիները արագ հասունացրին Վահագնին: Ապաստարանում, երբ սկսում էր ուրբա-կոծությունը, Վահենին և Արուսին իր թեփերի տակ էր անում:

Ութ տարեկան էր, որ սկսեց Արցախյան շարժումը:

Մեկ տարեկանում քայլեց, առանձին բառեր էր ասում, նմանակում ընտանի կենդանիների ձայները: Ուշիվ էր: Աշխատանքն թուղթ ու գրչի հետ էր: Թարգմանություններ էր անում: Այդ տարիներին՝ ձեռագիր, գրամեքենայի վրա չէի հավաքում, սկստկոցը խանգարում էր: Խելոք նստում էր մոտս, նայում էր նայում լցրած էջերին ու ասում՝ ինձ համար էլ գրիր: Վերցնում էի թուղթը՝ մի քանի տող գրում, տալիս իրեն, քիթը կախում էր ու ասում՝ քոնը շատ է, ինձ քիչ:

Մի ընդհանուր տետր ուներ, 48 էջանոցներից, 4-5 տարեկան էր, իր անկյունն

Սիրելի ընթերցող, շարունակում ենք 44-օրյա պատերազմի նահատակների մասին պատմող մեր խորագիրը:

Այս անգամ ներկայացնում ենք Արցախի դուստր, հրաշալի, բանաստեղծու գրականագետ Ժաննա Բեգլունի արձակ պոեմը՝ նվիրված իր ՎԱՀԱԳՆ որդուն, որը հերոսի մահով նահատակվեց հրադադարից ժամեր առաջ:

Շուխ է եղնում բանաստեղծի ու մոր ամեն տողից, մորմուռն ու կարոտը դառնում են ընդվզում ու աղոթք, սեր ու անձիր ակնուսմանք առ մեր հերոս որդիները, մեր բոլոր ՎԱՀԱԳՆՆԵՐԸ...



Ժաննա Բեգլարյանը Շուխի, 2020 թ., օգոստոս

Վեց տարեկանում գնաց դպրոց: Ստեփանակերտի Աշոտ Դուլյանի անվան թիվ 2 դպրոցը մասնագիտությամբ մանկավարժիս համար դարձավ հարազատ օջախ: Վահագնին ես էի ճանապարհում դպրոց ու դպրոցից տուն բերում: Բաց երեխա էր, թաքցրած բան չուներ: Մեծ սիրով կապվեց առաջին ուուուցուուու: Էլ լիքա Առաքյալի հետ: Տիկին Էլմիրան կատակով ինձ ասում էր. «Զեր տանն ինչ լինում է, Վահագնը մեկիկ-մեկիկ ինձ պատմում է»: Համեստ էր, լսող էր, դրության մեջ մտնող: Սովորություն ուներ՝ ամեն առավոտ որոշակի գումար էի տալիս, որ բուխեցից ինչ-որ բան առնի, սնվի: Ու էնքան էի տալիս, որ ընկերների հետ կիսելու բան ունենար: Մի օր 10 կոպեկ տվեցի, ասացի.

— Բալաս, մոտս էրքան աս, էսօր աշխատավարձ կստանամ: Ասաց՝ մամ, ուզում ես էլ էլ մի տուր, մոտդ պահիր:



Խծաբերդն իր Սահունասարով:

ունեք, ասում էր՝ գնամ մի քիչ դաս սովորեմ: Նրա «դաս սովորելն» այդ ընդհանուր տետրի էջերը «գրելով» լցնելն էր:

Վահեն լացկան երեխա էր, ու Վահագն ակամայից դառնում էր իմ օգնականը:

Մարքաներ էր, կոկիկ, աչքը՝ կուշտ:

Ով նրան կոնֆետ էր առաջարկում, ասում էր՝ մենք ունենք: Մի անգամ հոր տնօրենի կինը նրան ընկույզի կեղևից սևացած մատներով ծիրան է մեկնում, 3 տարեկան Վահագնը չի վերցնում: Հայրն ասում է.

— Վահագն, ինչու չես վերցնում:
— Էդ տոտայի ձեռքերը կեղտոտ են, — արդարանում է երեխան:

Մանկությունից սուր հիշողություն ուներ:

Որևե տեղ թողած իրը հաջորդ օրը կհիշեր, կգնար կրեբեր: Քնեցնելիս ես նրան օրորոցային չէի երգում, արտասանում էի, հիմնականում՝ Հովի. Թումանյանի բալլադները, առանձին մանկական ոտանավորներ: Թումանյանի «Թագավորն ու չարչին» շատ էր սիրում: Ասում էր՝ «Մատնիք-մարջանն» ասա: Անգիր էր արել ու բակի երեխաների, մայրիկների համար արտասանում էր:


Բակի կանանցից մեկը մի օր Վահագնին ասում է.

— Մամադ սիրուն կին աս: Վահագնն ասում է.
— Իմ մաման կին չի, իմ մաման աղջիկ է:

Ու բակի կանայք Վահագնի պատասխանից կարգին աշխուժանում են:

Փոքր միջավայրերն առանձնանում են մարդկային հարաբերությունների անմիջականությամբ ու ջերմությամբ: Վահագնի մանկությունն անցել է շատ մտերմիկ միջավայրում, ինչը նպաստել է նրա մարդկային ազնիվ որակների ձևավորմանը: Շատ ընկերասեր էր:

Սիրում էր ընկերներին տուն բերել, ամեն ինչ կիսել նրանց հետ, հատկապես ուտելիքը, ինքը դժվար ուտող էր: Ընկերության մեջ անդամագրությունը մնաց մինչև նրա վերջին պահը:



Գիսանեն ու Վահագնը «Տատիկ, պապիկ» հուշարձանի մոտ:

Փողոցից երբեք վեճ չբերեց տուն: Ընկերների միջև վեճեր փարատողն էր, խաղաղության աղավախ:

Առաջին դասարանից ընկերություն էր անում Պետրոսյան Արմենի հետ. միևնույն թաղում էինք ապրում: Երեխաների մտերմությունը վերածվեց ընտանիքների բարեկամության: Շատ անգամ են ընկերներով



Վահագնի գեղեցիկ ընտանիքը:

մեր տանը գեղեցիկ պահեր անցկացրել, հատկապես երբ Վահագնին և Արմենին յոթերորդ դասարանում միացավ Պողոսյան էրիկը, որին երաժշտական դպրոցի աղջիկները, և ընդհանրապես աղջիկները շատ էին սիրում: Սկսվեց տղաների դժվար տարիքը: Պատվով հայրախաբեցինք:

Մոր և որդու փոխադարձ վստահությունը մնաց:

Սիրում էր խորհուրդ հարցնել, կիսվել: Դպրոցական, պատանեկան սերեր ունեցավ: Կուտ գնացին: Տղամարդավարի իրեն դուրս էր քաշում այդ հոգեվիճակներից:

Համալսարանից հետո սկսեց աշխատել ոչ իր մասնագիտությամբ:

Ընդհանրապես էությանը հումանիստ էր, գեղեցկությունների սիրահար:

Մի օր եկավ Նարեկացի համալսարան, ուր դասախոսում էի, լսարանի դուռը ձեռք, դուրս եկա: Մոտը խաբարյաչ, խաճ աչքերով մի աղջիկ էր կանգնած: Ասաց.

— Մամ, Օֆան աս, ծանոթացիր:

Բարեկցիք իրար: Հասկացա, որ Վահագնի մոտ ամեն ինչ արդեն որոշված է: Գիտեի, որ միասեր է, որ հենց այնպես, առանց խորը զգացումների աղջիկ չէր բերի հետս ծանոթացնելու: Երջանիկ էի որդուս երջանկությամբ: Մի տարի անց ամուսնացան: Աստված փորձարկեց Վահագնի և Օֆելյայի սերը: Ինը տարի երեխա չունեցան, բայց չտրտնջացին, չուսահատվեցին, հավատացին, որ մի օր իրենց ընտանիքը գտնելու է իր լիարժեք ու կատարյալ երջանկությունը: 2015-ի նոյեմբերի 20-ին ծնվեց Գիսանեն: Աշխարհն իմն էր: Վահագնի նվիրվածությունն ու պատասխանատվությունն ավելի կոնկրետացավ:

2017-ին Նանանն ծնվեց: Վահագնի հոգու տոնը կրկնապատկվեց: Ճանաչողները կվկայեն, որ Վահագնը չնչին առիթն օգտագործում էր ընտանիքի համար տոն դարձնելու:

Երեխաներիս համար մի բացարձակ երջանիկ պահ գոյություն ուներ: Դա ճնրն-դավայրս՝ Խծաբերդ գնայն էր: Վահագնի մանկության ամենաձրեղ պահերն անցել են Խծաբերդում, իմ մանկությունն տանը, հորս և մորս մոտ: Այնպես ստացվեց, որ մեկ ու կես տարեկանում Վահագնին վրստահեցի ծնողներիս խնամքին. ես պիտի վերադառնայի աշխատանքի: Մտուր - մանկապարտեզին չհարմարվեց: Եվ մենք ընտրեցինք ամենավստահելի տարբերակը: Երբևէ չեմ փոշմանել: Վահագնը շատ վե-